

ԱՎԱՏՐՈՆԵԶԻԱԿԱՆ (ՄԱԼԱՅԱ-ՊՈԼԻՆԵԶՅԱՆ) ԼԵԶՈՒՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ. ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՆՈՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Դավիթ Գյուրջիյան

Բանասիրական գիտությունների թեկնածու
Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան
ՀՀ, Երևան, Թումանյան 42
Էլ. հասցե՝ gyurjidav@mail.ru

Հոդվածը ներկայացվել է 23.03.2022, գրախոսվել է 20.02.2023, ընդունվել է տպագրության 11.04.2023
DOI: 10.53548/0320-8117-2023.1-125

Ներածություն

Ավատրոնեզիական կամ մալայա-պոլինեզյան¹ 1000-ից ավելի լեզուներով խոսում են Հարավարևելյան Ասիայի (Ինդոնեզիա, Մալայզիա, Ֆիլիպիններ, Բրունեյ և Արևելյան Թիմոր), Խաղաղ օվկիանոսի կենտրոնական և հարավարևմտյան մասերի բազմաթիվ կղզիներում (ավելի քիչ՝ նաև մայրցամաքային Ասիայում), որոնք կոչվում են Օվկիանիա, և Մադագասկարում: Օվկիանիան բաղկացած է չորս մասից՝ Մելանեզիա (սրա կազմի մեջ է մտնում Նոր Գվինեան), Միկրոնեզիա, Պոլինեզիա և Նոր Զելանդիա: Այս տեղանուններից երեքը կան լեզվաընտանիքը կազմող խմբերի անուններում:

Ավատրոնեզիական կամ մալայա-պոլինեզյան լեզվաընտանիքը² ներկայանում է չորս խմբով՝ Ինդոնեզյան, մելանեզյան, պոլինեզյան և միկրոնեզյան:

Ինդոնեզյան (կամ մալայան) խմբի մեջ մտնում են Ֆիլիպինյան, Բոռնեո (Կալիմանտան), Մալակկա, Մադագասկար, Սումատրա և մի քանի այլ կղզիների բնիկների լեզուները (մալայերեն, մալգաշերեն, ճավայերեն, բատակ և այլն):

Մելանեզյան խմբի մեջ մտնում են Սոդոմոնյան, Խաղաղության, Նոր Հիբրիդյան, Ֆիջի և այլ կղզիների բնիկների լեզուները (մալո, մարովո, մոնո, տասիրիկի և այլն):

Պոլինեզյան խմբի մեջ մտնում են Սամոայի, Տահիտիի/Թա(հ)իթիի, Նոր Զելանդիայի և Մարքիզյան կղզիների բնիկների լեզուները (մաորիերեն, ռապանուերեն և այլն):

¹ Հայկական բազմահատորյա հանրագիտարանում գլխաբառային բառակապակցությունն է **մալայա-պոլինեզյան լեզուներ**, ապա նոր՝ տեքստային *ավատրոնեզիական լեզուներ* (Հայկական սովետական հանրագիտարան 1981, 147): «Լեզվաբանական բառարանում» տրված է ածանցով տարբերվող **ավատրոնեզյան լեզուներ** անվանումը (Պետրոսյան, Գալստյան, Ղարազյույան 1975, 32):

² Մալայա-պոլինեզյան լեզուների ցեղակցությունը առաջինը սահմանել է իսպանացի բանասեր Լորենցո Հերվաս Ի Պանդուրոն իր «Հայտնի ժողովուրդների լեզուների կատալոգ, նրանց թվարկումը, բաժանումն ու դասակարգումը ըստ տարատեսակների և բարբառների» վեցհատորյա աշխատության մեջ (1800-1804) (Ջահուկյան 1960, 218-219):

Միկրոնեզյան խմբի մեջ մտնում են Մարշալյան և Կարոլինյան կղզիների բնիկների լեզուները (մարշալերեն, կիրիբատի(երեն) և այլն)³:

Ավստրոնեզիական (մալայա-պոլինեզյան) ընտանիքի շատ լեզուներ առհասարակ քիչ են ուսումնասիրված, այդ թվում՝ հայերենագիտության մեջ, անդրադարձներ այս լեզուներին հազվադեպ են լինում: Թեև Պարսկաստանի Նոր Զուլայից, Հնդկաստանից և այլ տեղերից նշված տարածքների մի մասում վաղուց հաստատվել են հայեր, եղել են ձևավորված գաղութներ⁴ և, բնականաբար, տեղաբնիկ ժողովուրդների հետ՝ առնչություններ, այնուամենայնիվ, հայերեն գրավոր աղբյուրներում այս լեզուների անունների նույնիսկ հիշատակումներ չկան⁵: Այս և մի շարք այլ պատճառներով հստակություն չկա ավստրոնեզիական կամ մալայա-պոլինեզյան ընտանիքի լեզուների հայերեն բազմաթիվ անունների մեջ:

Հայերենում այս ընտանիքի լեզուներն անվանելու համար գործածվում են՝ ա) փոխառյալ լեզվանուններ, բ) հայակազմ բառակապակցություններ, գ) **-երեն** վերջածանցով լեզվանուններ: Դրանց մեծ մասը տարբերակներ ունի (բառային, բառակազմական, ուղղագրական):

Ավստրոնեզիական կամ մալայա-պոլինեզյան լեզվաընտանիքի մի շարք լեզուներ տարբեր պետություններում պաշտոնական լեզվի կարգավիճակ ունեն՝ Մալայզիա, Սինգապուր, Բրունեյ, Ինդոնեզիա, Մադագասկար, Ֆիլիպիններ, Մարշալյան Կղզիներ, Սամոայի Անկախ Պետություն, Ֆիջիի Կղզիներ, Տոնգայի Թագավորություն, Նաուրու և այլն: Հատկապես պաշտոնական լեզուների անունները պետք է միանշանակ ընդունելի ձև ունենան: Թեպետ այդպիսի կարգավիճակ ունեցող լեզուների հայերեն անունների մեջ տարբերակայնություն ավելի քիչ է նկատվում, այնուամենայնիվ, սրանց մեջ կան լեզվանուններ, որոնք ունեն մեկից ավելի (նույնիսկ մինչև հինգ) տարբերակներ, ուստի կանոնարկման և միօրինակություն հաստատելու խիստ պահանջ կա:

Քննենք մալայա-պոլինեզյան լեզուների այն անունները, որոնք գործածական են հայերենում (լեզվաբանական, աշխարհագրական, ազգագրական աշխատանքներ, բառարաններ, զանազան տեղեկատուներ, դասագրքեր և այլն)՝ հատուկ անդրադառնալով տարբերակներ ունեցող լեզվանուններին:

³ Հմմտ. Պետրոսյան, Գալստյան, Ղարաբյուլյան 1975, 262, Աղայան 1987, 684-685, Խաչատրյան 2008, 273:

⁴ Հանգամանորեն տե՛ս Աբրահամյան 1967, 293-325 («Ինդոնեզահայ գաղթավայրը», «Հայերը Հեռավոր Արևելքում», «Հայերը Ֆիլիպինյան կղզիներում և Նոր Զելանդիայում»), Աճառյան 2002, 321-334 («Ճավա», «Ցեղերես և Փիլիպպեան կղզիներ»), Հայ գաղթաշխարհի պատմություն (միջնադարից մինչև 1920 թ.) 2003, 45-455 («Մալայզիայի Պինանգ կղզի»):

⁵ Գաղութի լեզվավիճակի առումով ուշագրավ է հետևյալ տեղեկությունը. «Հայերը միմեանց հետ ընդհանրապես Հայերեն միայն կը խօսին, թէև գիտեն և Անգլիերեն և մասամբ ևս Հոլլանդերեն: Այլ և չեն պակսեր որք ի հաճոյս զաւակացը կամ լոկ վասն օտարասիրութեան կը նախընտրեն շրջանում անգամ օտար լեզուով խօսիլ» (Յ. Տ. Կ. Յ 1899, 465):

Լեզվանունների գիտական անվանացանկում տարբերակայնությունը վերացնելը (կամ նվազագույնի հասցնելը) արդիական և անհրաժեշտ քայլ է⁶:

1. ԻՆԴՈՆԵԶՅԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ

Ինդոնեզյան ճյուղն ընդգրկում է Ճավա, Սումատրա, Բոռնեո, Սուլավեսի (Ցելեբես) և շրջապատի մյուս կղզիներում, ինչպես նաև Ֆորմոզայում և Մադագասկարում խոսվող շուրջ 200 լեզուներն ու բարբառները:

ՄԱԼԱՅԵՐԵՆ

Մալայերենը մալայացիների լեզուն է (նախկինում **մալայացի** էին կոչում Հարավարևելյան Ասիայի մալայա-պոլինեզյան լեզվաընտանիքի ինդոնեզյան խմբի լեզվով խոսող ժողովուրդներին): Տարածված է Սումատրա կղզում, Մալակկա թերակղզում, Կալիմանտան կղզու ափամերձ տարածքներում, ինչպես նաև մի շարք փոքր կղզիներում: Հին մալայերեն գրական ամենավաղ հուշարձանները VII դարից են:

Մալայերենը 1969 թվականից Մալայզիայի պետական լեզուն է: Ներկայումս Մալայզիայում մալայերեն խոսողների ընդհանուր թիվը՝ 250 միլիոն մարդ, որոնցից 45 միլիոնի համար այն մայրենի լեզու է: Պետական լեզվի կարգավիճակ ունի նաև Սինգապուրում (անգլերենի, չինարենի և թամիլերենի հետ), Բրունեյում (պաշտոնական անունը՝ Բրունեյի մալայերեն):

Մալայերեն լեզվանունը հաջողված կազմություն է (հմմտ. ռուս. *малайский язык*, անգլ. *Malay language*, *Malay*, ֆրանս. *malais*, *langue malaise*), որևէ տարբերակ չունի: Հայերենի բառապաշարում ամրակայված լեզվանուններից է: XX դ. կեսերից հանդիպում է հայերեն լեզվաբանական աշխատություններում, ինչպես՝ «**Մալայերենի** մեջ գերադրականը կազմելու ձևերից մեկը կրկնությունն է, օրինակ՝ *tinggi-tinggi* «ամենաբարձր»⁷:

Ավստրոնեզիական լեզուների անուններից ամենաշատը **մալայերեն**-ն է գրանցվել հայերենի բառարաններում: XIX դարի վերջին հայտնվել է ֆրանսերեն-հայերեն բառարանում՝ *Malai, Malais* - **մալայացի, մալայերէն** բառազույգերի արձանագրումով⁸, XIX դ. սկզբին՝ հայերեն-անգլերեն բառարանում՝ **մալայերէն** - *Malay, Malay language*⁹: Լեզվանվան գրանցումը թարգմանական (հայերեն-օտար լեզու և հակառակը) բառարաններում հետագայում շարունակվել է և հասնում է մինչև մեր օրեր¹⁰:

⁶ Հայերեն լեզվանունների մասին տե՛ս Գյուրջինյան 2021, 3-17, 3-17, 17-37, 217-239, 216-231, Գյուրջինյան 2022, 30-54:

⁷ Աճառյան 1952, 83:

⁸ Տեմիրճիպաշեան 1896, 237:

⁹ Փափազեան 1905, 291:

¹⁰ Յովհաննէսեան 1925, 549, Պայեան 1926, 1558, Գույումճեան 1950, 475, 194, Ռուս-հայերեն բառարան 1956, 194, Հարությունյանց 1963, 154, Անդրեասյան 1976, 450, Ասմանգուլյան, Հովհաննիսյան 1984, 568, Հայ-ռուսերեն բառարան 1987, 454, Բարլեզիզյան 2009, 619:

XX դ. երկրորդ կեսից լեզվանունը ներմուծվել է միալեզվյան բառարանների բառացանկ¹¹: Ակադեմիական բացատրականն այն ներկայացնում է երեք արժեքով (գոյ., մկբ., ած.)՝ «մալայացիների լեզուն», «մալայացիների լեզվով», «մալայացիների լեզվի, մալայացիների լեզվին հատուկ»: Բառարանում այս մոտեցումը՝ ձևաբանական երեք արժեքներով ներկայացնելը, կիրառվել է լեզվանունների նկատմամբ առհասարակ: Էդ. Աղայանի բառարանում ածականի և մակբայի արժեքները միավորված են:

Մինչև XX դ. կեսերը **մալայերեն** էր կոչվում Ինդոնեզիայի պաշտոնական լեզուն, որը 1945 թ. անվանվեց **ինդոնեզերեն**:

ԻՆԴՈՆԵԶԵՐԵՆ

Ինդոնեզիան Հարավարևելյան Ասիայում՝ Ասիա և Ավստրալիա մայրցամաքների միջև գտնվող Մալայան (Ինդոնեզիական) արշիպելագի վրա տարածվող պետությունն է, որի բնակիչների մեծ մասը (96%) խոսում է ինդոնեզյան տարբեր լեզուներով: Երկրի պետական լեզուն ինդոնեզերենն է, խոսողների ընդհանուր թիվը շուրջ 200 միլիոն է: Ինդոնեզերենը սերել է մալայերենից, նրա մի տարբերակն է:

Ինդոնեզերեն-ը «Լեզվաբանական բառարանում» թեև գործածվել է «Մալայերեն» բառահոդվածում, սակայն գլխաբառ չի դարձել, ինչպես և բացատրական բառարաններում: Գրանցվել է միալեզվյան և թարգմանական մի շարք բառարաններում¹²: Այդ առումով զիջում է **մալայերեն**-ին:

ՄԱԼԳԱՇԵՐԵՆ

Մադագասկար կղզու՝ Մադագասկարի Հանրապետության հիմնական բնակչության՝ մալգաշների լեզուն է, երկրի պաշտոնական լեզուներից մեկն է (մյուսը ֆրանսերենն է), խոսողների թիվը՝ մոտ 25 միլիոն:

Ժողովրդանվանը միացել է **-երեն** վերջածանցը, և կազմվել է **մալգաշերեն** լեզվանունը: Անցյալ դարի կեսից արդեն գործածության մեջ է. «**Մալգաշերեն** լեզվով alina 10.000 նշանակում է բուն «գիշեր»»¹³: **Մալգաշերեն**-ը գլխաբառ է դարձել հայերենի միալեզվյան մի շարք բառարաններում¹⁴:

Մինչև վերջին տարիները լեզվանունը տարբերակայնություն չի ունեցել: Օտար լեզուների ազդեցությամբ հայերենում կազմվել է **մալագասերեն** տարբերակային լեզվանունը: Օրինակ՝ «Ամենահեռավորը **մալագասերեն** լեզուն է»¹⁵: Համացանցային ինքնաշխատ թարգմանություններում այժմ կիրառվում

¹¹ Բարսեղյան 1973, 206, Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան 1974, 460, Պետրոսյան, Գալստյան, Ղարազյուլյան 1975, 206, Աղայան 1976, 953, Հայոց լեզվի հանգաբառարան 1976, 353, Հանրագիտական բառարան 2018, 280:

¹² Հայոց լեզվի հանգաբառարան 1976, 353, Բաղլեզիզյան 2009, 359, Հանրագիտական բառարան 2016, 850:

¹³ Աճառյան 1952, 238:

¹⁴ Բարսեղյան 1973, 631, Պետրոսյան, Գալստյան, Ղարազյուլյան 1975, 206, Աղայան 1976, 953, Հանրագիտական բառարան 2018, 281:

¹⁵ Ստեփանյան 2015, 13:

է **մալագասերեն** տարբերակը¹⁶ (հմմտ. անգլ. Malagasy Language, ֆրանս. malagache, ռուս. малагасийский язык):

ՖԻԼԻՊԻՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԼԵԶՎԻ ԱՆՈՒՆԸ

Ֆիլիպիններում պաշտոնական լեզվի կարգավիճակ ունի (անգլերենի հետ) տագալների լեզուն, որը պատկանում է ավստրոնեզիական ընտանիքի ինդոնեզյան ճյուղին: Խոսողների թիվը՝ 49 միլիոն մարդ:

Տագալների լեզվի ինքնանվանումն է **տագալոգ**: Հայերենում նախ գործածվել է փոխառյալ լեզվանունը (հիմնականում **լեզու** բառի զուգադրությամբ) «Ֆիլիպինյան **տագալոգ լեզուն** էլ միացումների ժամանակ դնում է «ավելի» (labi) բառը»¹⁷: Հետո –**երեն** ածանցով կազմվել է հայերեն լեզվանուն՝ **տագալոգերեն**. «XVII դ. երևան են գալիս քերականական աշխատություններ **տագալոգերենի** մասին»¹⁸: «Լեզվաբանական բառարանում» գրանցվել է միայն փոխառյալ լեզվանունը¹⁹:

Այս բառարանի հրատարակումից մեկ տասնամյակ անց գործածության մեջ դրվեց **տագալոգ**-ի հայակազմ մեկ այլ համարժեք՝ **տագալերեն**-ը, որի բառակազմական հիմքը **տագալ** ժողովրդանունն է: Հայերեն կազմությունը գործածվել է հայկական բազմահատորյա հանրագիտարանում. «Խոսում են **տագալերեն** լեզվով (ունեն հարուստ գրականություն)»²⁰, «XVI դ. վերջից սկսվել է գրատպությունը, երևան են եկել իսպ. միջնադարյան լեզենդների («Բեռնարդո դել Կարպիո» ևն) հարմարեցված տեքստերը (հիմնականում **տագալերեն**)»²¹: Այս անունն է որդեգրվել աշխարհագրական անունների բառարանում ևս. «1946-ի հուլիսի 4-ից անկախ պետություն է. երկրի պաշտոնական լեզուներով կոչվում է՝ **տագալերեն** Republika ng Pilipinas, անգլ. Republic of Philippines»²²:

Օտար լեզվանունը հայերենացնելն անհրաժեշտ քայլ է, եթե, իհարկե, հնարավոր է: Համեմատենք ռուս. тагалог և тагальский язык, գերմ. Tagalisch, թեպետ սրանց կողքին կան անգլ. Tagalog, ֆրանս. tagalog:

Վերջին շրջանում նկատելի է, որ արդեն ընդունելի դարձած **տագալերեն**-ն ունի հայերեն երկու տարբերակներ: Ուղղագրական տարբերակն է **թագալերեն**: Եթե **տ**-ով գրության (**տագալոգ** և **տագալերեն**) դեպքում առկա է ռուսերենի ազդեցությունը, ապա **թ**-ով տառադարձումը կատարվել է անգլերենի ազդեցությամբ: Որոշակի կայունություն ունեցող լեզվանվան դեպքում տարբերակայնությունը կարող է շփոթ առաջ բերել: Երբեմն տարբերակայնությունը դրսևորվում է անգամ միևնույն գրքում: Օրինակ, «Հանրագիտա-

¹⁶ Տե՛ս <https://hy.glosbe.com/mg>:

¹⁷ Աճառյան 1952, 194:

¹⁸ Զահուկյան 1960, 200:

¹⁹ Պետրոսյան, Գալստյան, Ղարազյույան 1975, 288:

²⁰ Հայկական սովետական հանրագիտարան 1985, 539 («Տագալներ» բառահոդվածը):

²¹ Հայկական սովետական հանրագիտարան 1986, 660 («Ֆիլիպիններ» բառահոդվածը):

²² Գրգեարյան, Հարությունյան 1989, 460:

կան բառարանի» «Ֆիլիպիններ» բառահոդվածում գործածվել է **թագալերեն**-ը, «Տագալներ» բառահոդվածում՝ **տագալերեն**-ը²³:

Հազվադեպ է **տագալոգերեն**-ի ուղղագրական տարբերակը՝ **թագալոգերեն**²⁴, որն անգլերենի ազդեցության հետևանք է:

Վերջին տասնամյակներում շրջանառվում է **Ֆիլիպիններեն** լեզվանունը, որը տարածում գտած տագալերեն **Ֆիլիպինո** լեզվանվան հայերեն տարբերակն է: Հաճախ նույնականացնում են տագալերենի հետ, երբեմն գործածում նաև երկրի լեզուների հավաքականության իմաստով: Ֆիլիպիններեն կոչվող լեզուն հենվում է տեղական լեզուների, հատկապես տագալերենի վրա: Տագալերենը և ֆիլիպիններենն ընկալվում են իբրև մեկ լեզվի տարատեսակներ. առաջինն ըմբռնվում է որպես ազգային խմբի լեզվի անուն, երկրորդը՝ **Ֆիլիպիններեն**-ը՝ համերկրային պաշտոնական:

ՃԱՎԱՅԵՐԵՆ

Ճավա, Սումատրա և այլ կղզիների հիմնական բնակչության լեզուն է, խոսողների թիվը հստակ չէ. 80-100 միլիոն: **Ճավայերեն** լեզվանվան հիմքում ընկել է կղզու անունը, թեև կարող է մեկնաբանվել այսպես ևս. **ճավա-յացիներ** բառի տեղանիշ կամ ազգություն ցույց տվող **-ացի** ածանցն ընկել է, ավելացել է **-երեն**-ը:

Ճավայերեն-ը ավստրոնեզիական (մալայա-պոլինեզյան) լեզվաընտանիքի լեզուների սակավաթիվ անուններից է, որ գրանցվել է հայերենի բանասիրական և հանրագիտական բառարաններում²⁵: Բացատրական բառարանում ներկայացված է երկու արժեքով. գոյականի՝ «ճավայացիների լեզուն» և ածականի/մակբայի՝ «ճավայացիների լեզվով» իմաստներով: Ի դեպ, գրանցվել են նաև **ճավայական** և **ճավայացիներ** բառերը:

Վաղուց գործածությունից դուրս են մղվել **յավայերեն** և **ջավայերեն** տարբերակները²⁶:

Ճավայերենը, մասնավորապես հին ճավայերենը հայտնի է նաև **կավի** անունով²⁷: Կավի լեզվով գրավոր հուշարձաններն ավանդված են IX դարից:

ՄԱԴՈՒՐԵՐԵՆ

Մադուրերենը Ճավայից հյուսիս-արևելք ընկած Մադուրա և շրջակա մանր կղզիներում, ինչպես նաև Ճավայի արևմտյան ափին ապրող մալայան բնիկների՝ մադուրների լեզուն է, խոսողների թիվը՝ մոտ 14 միլիոն:

²³ Հանրագիտական բառարան 2018, 1124, 957: Ի դեպ, դպրոցական հանրագիտարանի «Ֆիլիպիններ» բառահոդվածում գործածվել է **տ-ով** տարբերակը՝ **տագալերեն** (Դպրոցական մեծ հանրագիտարան 2008, 540):

²⁴ Հարությունյան 2016, 419:

²⁵ Բարսեղյան 1973, 620, Աղայան 1976, 938, Հանրագիտական բառարան 2018, 265: Սփյուռքյան հայերեն-անգլերեն հիշատակված բառարանի հիմնական բառացանկում չկա, բայց գետեղված է «Աշխարհի գլխատր լեզուները» ցանկում՝ **Ճավայերեն** - Javanese (Գոյումճեան 1950, 1130):

²⁶ Հմմտ. «Շատ հետաքրքրական են **յավայերենի** դերանունները» (Աճառյան 1954, 91), «...դրանց լեզուների և բարբառների թիվը հասնում է 170-ի, որոնց մեջ ամենագլխավորներն են **մալայերենը** և **ջավայերենը**» (Աճառյան 1955, 532):

²⁷ Աղայան 1967, 585, 618:

Մադուրերեն-ը գլխաբառ է դարձել «Լեզվաբանական բառարանում»²⁸:
ՄԱԿԱՍԱՐԵՐԵՆ

Մակասարերենը Ինդոնեզիայի Ցելեբես (Սուլավեսի) խոշոր կղզում և նրա ափամերձ կղզիներում, Բոռնեոյի արևելյան և արևմտյան ափերին բնակվող մալայան մակասար ժողովրդի լեզուն է: Խոսողների թիվը՝ 1,6 միլիոն:

Մակասարերեն-ը գլխաբառ է դարձել «Լեզվաբանական բառարանում»²⁹: Հատկապես անգլերենի ազդեցությամբ հազվադեպ պատահում է **մակասար** փոխառյալ տարբերակը³⁰: Քիչ է պատահում, որ **-երեն** ածանցով նախապես կազմված և գործածված միավորի փոխարեն հետագայում նախապատվությունը տրվում է փոխառյալ տարբերակին: Սովորաբար հակառակ ընթացքն է. գործածվում է փոխառյալ լեզվանունը, որին հետո ավելանում է հայերենի **-երեն** ածանցը:

ՍՈՒՆԴԵՐԵՆ

Սունդերի լեզվով խոսում են Ճավա կղզու արևմտյան շրջաններում: Խոսողների թիվը՝ 38 միլիոն:

«Լեզվաբանական բառարանում» գլխաբառ է դարձել **սունդա** փոխառյալ լեզվանունը³¹ (ռուս. сунда կամ сунданский язык, անգլ. Sunda, Sundanese, ֆրանս. sounda):

Վերջին շրջանում ազգանիշ **սունդ** բառից **-երեն** ածանցով կազմվել են **սունդերեն**³² և **սունդաներեն**³³ (հմմտ. անգլ. Sundanese, անգլ. сунданский язык, գերմ. Sundanesisch) լեզվանունները: Վերջինիս փոխարեն սպասելի էր **սունդայերեն** տարբերակը:

ԲԱԼԻԵՐԵՆ

Բալին Ինդոնեզիայի Մալայան կղզեխմբի Փոքր Չոնդյան խմբի կղզիներից է: Կղզու բնակիչների լեզուն, ըստ «Լեզվաբանական բառարանի», կոչվում է **բալի**³⁴ (ռուս. бали կամ балийский язык, անգլ. Balinese, ֆրանս. bali, գերմ. Balinesisch, Bali), որ համանուն է կղզու անվանը: Խոսողների թիվը՝ 3,5 միլիոն:

Այս կարգի փոխառյալ լեզվանունների հայերեն համարժեքները կազմելու միտում դրսևորվեց առավելապես անկախության շրջանում: «Լեզու» բառակազմական իմաստն ունեցող **-երեն** ածանցով կազմվեցին, օրինակ, հնդկական մի շարք լեզուների անուններ՝ **բիհարերեն, գուջարաթերեն, քաշմիրե-**

²⁸ Պետրոսյան, Գալստյան, Ղարազյուլյան 1975, 205:

²⁹ Պետրոսյան, Գալստյան, Ղարազյուլյան 1975, 207:

³⁰ Հանրագիտական բառարան 2018, 285 («Մակասարներ» բառահոդվածում), հմմտ. նաև Հարությունյան 2016, 419:

³¹ Պետրոսյան, Գալստյան, Ղարազյուլյան 1975, 281:

³² Հարությունյան 2016, 419:

³³ Սունդաներեն ստեղնաշար (տե՛ս <https://play.google.com/store/apps/details?id=com.sundanese.keyboard.sundanesekeyboard&hl=hy&gl=US>)

³⁴ Պետրոսյան, Գալստյան, Ղարազյուլյան 1975, 43: Լեզվաբանության համալսարանական դասագրքի «Լեզուների ծանոթագրական ցանկի» մեջ կա միայն այս լեզվանվան համանունը, որը Նիգերիայի բանտոիդ լեզուների ենթախմբի լեզուներից մեկի անունն է (Աղայան 1987, 704):

րեն և այլն³⁵: Այդպես էլ **Բալի** / **բալի** տեղանուն / լեզվանունը հիմք դարձավ **բալիերեն** նորակազմության³⁶: Համացանցում որպես լեզվանուն ավելի շատ **բալիերեն**-ն է գործածված, քան **բալի**-ն:

ԲԻԿՈԼԵՐԵՆ

Ֆիլիպիններում, հիմնականում Լուսոն կղզում խոսվող լեզու է, խոսողների թիվը՝ 2,5 միլիոն:

«Լեզվաբանական բառարանը» գլխաբառ է դարձրել **բիկոլ** փոխառյալ լեզվանունը (նույն ձևն ունեն նաև այլալեզու համարժեքները)³⁷:

Բառակազմական միևնույն քայլով կազմվել է հայերեն **բիկոլերեն** լեզվանունը³⁸ (հմմտ. ռուս. бикол - бикольский язык տարբերակները): Վերջինս ունի **ք**-ով տարբերակը՝ **բիքոլերեն**³⁹:

ԲՈՒԳ(Ի)ԵՐԵՆ

Ինդոնեզիայի Սուլավեսի (Ցելեբես) կղզու հարավում և հարակից կղզիներում խոսվող լեզու է, խոսողների թիվը՝ 5 միլիոն: Գրության համակարգով, բառապաշարով և քերականական կառուցվածքով նման է մակասարերենին:

«Լեզվաբանական բառարանում» գլխաբառ է դարձել **բուգի** փոխառյալ լեզվանունը (ռուս. буги, անգլ. bugi, Bugis, Buginese, ֆրանս. bugi, գերմ. Bugi)⁴⁰: Ռուսերենում այժմ գործածվում են бугийский язык, անգլերենում՝ Buginese language բաղադրյալ անվանումները:

Բուգ/բուգիս ցեղանունից –**երեն** ածանցով կազմվել է **բուգերեն** հայերեն լեզվանունը⁴¹: Հնչյունական ոչ օրինաչափ փոփոխությամբ կազմվել է հայերեն մի տարբերակ ևս՝ **բուգայերեն**⁴², որն այլուր չի հանդիպում, բայց հանրագիտական բառարանում գործածված լինելը փաստ է:

ԻԼՈԿԵՐԵՆ

Հայերեն «Լեզվաբանական բառարանը» որպես գլխաբառ գրանցել է **իլոկանո** և **իլոկո** լեզվանունները⁴³: Բառարանում երկուսն էլ ներկայացվում են որպես ինդոնեզյան ճյուղի լեզուներ, խոսողների՝ իրար մոտ թվաքանակով (800 հազար և մեկ միլիոն), առանց միմյանց հետ կապի մատնանշման: Առաջինի համար ասվում է, որ գործածում են Ֆիլիպիններում, երկրորդի համար, որ խոսվում է Լուսոն կղզում (սա Ֆիլիպինների ամենամեծ կղզին է): Իրականում խոսքը նույն լեզվի մասին է:

³⁵ Մանրամասն տե՛ս Գյուրջինյան 2021, 17-37:

³⁶ Հարությունյան 2016, 419:

³⁷ Հմմտ. Պետրոսյան, Գալստյան, Ղարազյուլյան 1975, 67:

³⁸ Հանրագիտական բառարան 2016, 348 («Բիկոլ» բառահոդվածում):

³⁹ Հարությունյան 2016, 419:

⁴⁰ Պետրոսյան, Գալստյան, Ղարազյուլյան 1975, 69:

⁴¹ Հարությունյան 2016, 419:

⁴² Հանրագիտական բառարան 2016, 399 («Բուգիսներ» բառահոդվածում):

⁴³ Պետրոսյան, Գալստյան, Ղարազյուլյան 1975, 118: Այստեղ **իլոկ** գլխաբառ էլ կա, որը բացատրվում է որպես «գրատեսակ Ֆիլիպիններում, որից օգտվել են իլոկները և պամպանգները մինչև 1745 թ., երբ այն դադարեց գործածվելուց»:

XXI դարասկզբի տվյալներով **իլոկանո** և **իլոկո** տարբերակային անուններով հայտնի լեզվով խոսողների թիվը շուրջ 10 միլիոն է, որից մոտ 8 միլիոնի համար այն մայրենի լեզու է: Լուսոն կղզու հյուսիսում ապրող ժողովուրդների համար իլոկերենը ազգամիջյան հաղորդակցության լեզու է:

Գրեթե միաժամանակ այս լեզվանվան հայերեն երկու տարբերակ է ստեղծվել: Ժողովրդանունից և տարբերակային փոխառյալ լեզվանուններից (**իլոկանո** և **իլոկո**) կազմվել է հայերեն **իլոքերեն** լեզվանունը⁴⁴. Կ-ի փոխարեն **ք** է: Մյուս կողմից էլ ռուսերեն илоканский язык լեզվանվան ազդեցությամբ կազմվել է **իլոկաներեն** հայերեն կազմությունը⁴⁵:

իլոկ, **իլոկանո**, **իլոկո**, **իլոկաներեն** բառերը վկայում են, որ **կ**-ն ամրակայված է այս բառույթներում, ուստի **իլոքերեն**-ի և **իլոկաներեն**-ի փոխարեն ընդունելի կլիներ **իլոկերեն** լեզվանունը:

ԹԵԹՈՒՄԵՐԵՆ

Փոքր Զոնդյան կղզիների խոշորագույն կղզու հյուսիսարևելյան մասը զբաղեցնում է Արևելյան Թիմոր պետությունը, որը 1975-ին անկախացել է Պորտուգալիայից: Երկիրը երկու պաշտոնական լեզու ունի, որոնցից մեկը հասկանալի պատճառներով պորտուգալերենն է, մյուսը հայերենում անվան բառային և ուղղագրական տարբերակներ ունի՝ փոխառյալ **տետում**⁴⁶ և **թեթումերեն** (լեզուների տարբեր ցանկերում, որոնք հրապարակված են համացանցում): Թեթումերեն խոսողների թիվը 800 հազար է:

ԻԲԱՆԵՐԵՆ

Իբան ժողովրդի լեզվով խոսում են Կալիմանտան (Բոռնեո) կղզում՝ Մալայզիայի, Ինդոնեզիայի և Բրունեյի տարածքներում: Խոսողների թիվը՝ մոտ 700 հազար:

Հայերեն **իբաներեն** լեզվանունը նորակազմություն է, հանդիպում է համացանցում:

ԲԻՍԱՅԱ / ԲԻՍԱՅԵՐԵՆ

Ֆիլիպինների ամենամեծ էթնոլեզվական խմբի լեզուն է (խոսողների թիվը՝ 32,5 միլիոն): Անվան տարբերակներ են՝ **բիսայա** և **վիսայա**⁴⁷:

Հայերենացված **բիսայերեն** տարբերակը հազվադեպ հանդիպում է համացանցում:

ՍԱՍԱԿԵՐԵՆ

Ինդոնեզիայի Լոմբոն կղզու բնակչության գերակշիռ մասի լեզուն է, խոսողների թիվը՝ երկու միլիոնից ավելի: Օտար անուններն են՝ անգլ. *Sasak language*, ռուս. *сасакиский язык*: Կազմվել և համացանցում խիստ հազվադեպ հանդիպում է **սասակերեն** լեզվանունը՝ որպես բառակազմական օրինաչափության կիրառման հետևանք:

⁴⁴ Հարությունյան 2016, 419:

⁴⁵ Հանրագիտական բառարան 2016, 844 («Իլոկներ» բառահոդվածում):

⁴⁶ Աշխարհի պետությունների և տարածքների համառոտ տեղեկատու-բառարան 2012, 40:

⁴⁷ Պետրոսյան, Գալստյան, Ղարազյուլյան 1975, 67:

2. ՄԵԼԱՆԵԶՅԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ

ՖԻԶԻ ԿՂԶԻՆԵՐԻ ԲՆԻԿՆԵՐԻ ԼԵԶՎԻ ԱՆՈՒՆԸ

Խաղաղօվկիանոսյան Ֆիջի կղզիներում խոսում են մելանեզյան ճյուղի մի լեզվով, որը Ֆիջի Կղզիների Հանրապետության պաշտոնական լեզուներից մեկն է (անգլերենի և հինդիի հետ): Խոսողների թիվը կես միլիոնից ավելի է: «Լեզվաբանական բառարանում» լեզուն գրանցվել է **Ֆիջի** անունով⁴⁸, համահունչ ռուսերեն և եվրոպական համապատասխան լեզվանուններին: Լեզվանունը համանուն է Ֆիջի կղզանվանը. բնակիչները ֆիջիցիներն են:

Գործածվել է նաև **Ֆիջի կղզու լեզու** բաղադրյալ անվանումը⁴⁹:

Նորագույն շրջանում նկատվող միտումը այս դեպքում էլ է դրսևորվում. **-երեն** ածանցով կազմվել է **Ֆիջիերեն** լեզվանունը և գործածվել տեղեկատու տարբեր հրատարակություններում⁵⁰:

3. ՊՈԼԻՆԵԶՅԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ

ՊԱԼԱՈՒԵՐԵՆ

Պալաու կղզային պետության պաշտոնական լեզուներն են անգլերենը և պոլինեզիական պալաուերենը: Խոսողների թիվը մեծ չէ, մոտ 15 հազար:

Պալաուերեն հայերեն կազմությունը գործածվում է գիտատեղեկատվական գրականության մեջ⁵¹:

ՏՈՒՎԱԼՈՒԵՐԵՆ

Տուվալուն շատ փոքրիկ պետություն է Օվկիանիայում՝ Խաղաղ օվկիանոսի հարավարևմտյան մասում, Պոլինեզիայում: 1978-ին Մեծ Բրիտանիայից անկախացած երկրի պաշտոնական լեզուն անգլերենն է, «տարածված է նաև **տուվալուերեն** լեզուն»⁵²:

Այս լեզվի անունն ընդհանրապես չի հիշատակվում լեզվաբանության հայերեն դասագրքերում և լեզվաբանական բառարաններում:

ԶԱՏԿԻ ԿՂԶՈՒ ԲՆԻԿՆԵՐԻ ԼԵԶՎԻ ԱՆՈՒՆԸ

Արևելապոլինեզիական լեզուներից է Չիլիին պատկանող Զատկի կղզու բնիկների լեզուն (ինքնանվանումը՝ Vananga Rapanui «Վանանգա Ռապանուի», խոսողների թիվը՝ մոտ 3500): Կղզում պաշտոնական լեզվի կարգավիճակ ունի, թեպետ անհետացման եզրին է:

Ռապանուի հիմքից կազմվել է **ռապանուերեն** հայերեն լեզվանունը, որը բազմիցս գործածվել է ռապանուերենի և հայերենի հնչյունական, բառային և քերականական ընդհանրությունները քննող աշխատանքներում: Օրինակ՝ «Բոլոր պոլինեզիական լեզուները, այդ թվում և **ռապանուերենը**, կցական-

⁴⁸ Պետրոսյան, Գալստյան, Ղարաբյուլյան 1975, 315:

⁴⁹ Աճառյան 1952, 487:

⁵⁰ Դպրոցական մեծ հանրագիտարան 2008, 543, Աշխարհի պետությունների և տարածքների համառոտ տեղեկատու-բառարան 2012, 134, Հանրագիտական բառարան 2018, 1126:

⁵¹ Աշխարհի պետությունների և տարածքների համառոտ տեղեկատու-բառարան 2012, 96, Հանրագիտական բառարան 2018, 763:

⁵² Հայկական սովետական հանրագիտարան 1986, 121, նաև Աշխարհի պետությունների և տարածքների համառոտ տեղեկատու-բառարան 2012, 127:

վերլուծական կառուցվածք ունեն»⁵³։ Սակայն հարկ է նշել, որ **ռապանուե-րեն**-ը չի հիշատակվում լեզվաբանության համալսարանական դասագրքերում և լեզվաբանական բառարաններում։

Հազվադեպ է փոխառյալ **ռապանուի** տարբերակը⁵⁴։ Պարզ է, որ այս տարբերակը հայախոս մարդուն անգամ չի հուշում, որ խոսքը լեզվի մասին է, այնինչ **-երեն** ածանցը դյուրացնում է բառի՝ որպես լեզվանվան ընկալումը։

Ռապանուերեն լեզվանվանը զուգահեռ երբեմն գործածվում է **պոլինեզերեն** ընդհանուր անունը։ Այսպես. «Չատկի կղզի, Ռապանուի (իսպ. Pascua, պոլինեզերեն Rapa Nui)»⁵⁵։

ՏԱՀԻՏԻ / ԹԱ(Հ)ԻԹԻ ԿՂՋՈՒ ԲՆԻԿՆԵՐԻ ԼԵՋՎԻ ԱՆՈՒՆԸ

Խաղաղօվիակոսյան **Տահիտի/Թահիթի** հրաբխային կղզին Ֆրանսիայի տիրույթ է. այստեղ է Ֆրանսիական Պոլինեզիայի վարչական կենտրոնը։ Կղզու բնիկների լեզվով խոսողների թիվը 130 հազար է։

Կղզու անունը հայերենում մի քանի տարբերակ ունի։ Tahiti-ն ֆրանսերենից հայերեն տառադարձվել է **Տահիտի**⁵⁶։ Ըստ այդմ էլ լեզվաբանության մեջ գործածվել է **տահիտի** լեզվանունը⁵⁷։

Մյուս կողմից էլ կա անգլերենից տառադարձված Թահիթի կղզանունը⁵⁸, որից էլ՝ **թահիթի** լեզվանունը⁵⁹։ Սա էլ իր հերթին ունի առանց **հ**-ի տարբերակ՝ **Թահիթի**⁶⁰/**թահիթի**։

Հանդիպում է նաև **տահիթի** տարբերակը⁶¹։ «Լեզվաբանական բառարանում» գլխաբառ են դարձել **տահիտի** և այս՝ **տահիթի** խառն (հիբրիդային) տառադարձմամբ տարբերակները⁶²։

Արևելահայերենի ազգային կորպուսի միջոցով պարզենք այս երկու տարբերակների գործածությունը։ **Տահիտի** անվան հարացուցային միավորներից ԱՐԵՎԱԿ-ում արձանագրվել է գործածության 11 դեպք, ընդ որում

⁵³ Ստեփանյան 2015, 15։

⁵⁴ Հարությունյան 2016, 421։

⁵⁵ Հայկական սովետական հանրագիտարան 1976, հ. 3, 662։

⁵⁶ Այդ տարբերակն է տրված հայկական հանրագիտարանում, աշխարհագրական անունների բառարանում (Հայկական սովետական հանրագիտարան 1985, 214 («Տահիտի» բառահոդվածը), Գրգեարյան, Հարությունյան 1989, 374)։

⁵⁷ Աճառյան 1952, 17, Աճառյան 1955, 283, Աղայան 1987, 685։ Լեզվաբանական թարգմանական բառարանում **տահիտի** է (Հարությունյան 1963, 211)։ Հ-ի բացակայությունը ռուսերենի ազդեցության վկայություն է։

⁵⁸ Հմմտ. «Գոգենը **Թահիթի** վերադարձավ նորովի լցված լավատեսությամբ» (Ռոդըմ 2020, 56)։

⁵⁹ Խաչատրյան 2021, 412։

⁶⁰ Հանրագիտական բառարան 2016, 768։ Այստեղ կա նաև «Թաիթիցիներ» բառահոդված։

⁶¹ Հայկական սովետական հանրագիտարան 1974, 485 («Աշխարհի լեզուներ» բառահոդվածը), Խաչատրյան 2008, 273 (հեղինակը հետագայում որդեգրել է տառադարձման **թահիթի** ձևը)։ Հ. Աճառյանի «Լիակատար քերականության» տեքստում **տահիտի** է, սակայն գրքի վերջի «Լեզուների ցանկում»՝ **տահիթի** (Աճառյան 1952, 24, 156. դա հեղինակից անկախ է եղել)։

⁶² Պետրոսյան, Գալստյան, Ղարազյուլյան 1975, 289։

չորսը Հայկական սովետական հանրագիտարանում⁶³, յոթը՝ աշխարհագրական բառարանում⁶⁴: Այսինքն՝ գիտական խոսքում նախապատվությունը տրվել է **Տահիտի**-ին:

Թաիթի տարբերակը գործածվել է 21 անգամ: Գործածության պատկերը խայտաբղետ է: Զ. Լոնդոնի երկերի թարգմանություններում (անգլերենից) այս տարբերակը գործածվել է 8 անգամ⁶⁵, մամուլում՝ 9 անգամ, մնացածը՝ Խնկո Ապեր, ազատ խոսք և հանրագիտարան: Թվում է, թե դեր է խաղացել նաև այն, որ մարդկանց ականջին **տ**-երով տարբերակը «ռուսերեն» է հնչել: Կարևոր է այն փաստը, որ ըստ ԱՐԵՎԱԿ-ի ընձեռած տվյալների՝ **Թաիթի**-ի ամենավաղ գործածություններից մեկը եղել է 1847 թ., թիֆլիսյան «Կովկաս» շաբաթաթերթում:

Վերջին շրջանում տարբերակներ ունեցող փոխառյալ լեզվանվան փոխարեն գիտական շրջանառության մեջ են մտել **–երեն** վերջածանցով հայերեն կազմություններ, որոնցում ևս արտացոլվում է տառադարձման տարբերակայնությունը: Այսպես. **տահիտի** հիմքից կազմվել է **տահիտիերեն**⁶⁶: Ինչպես տեսնում ենք, բառավերջի **ի**-ն պահպանվել է: Այս առումով համեմատելի է **բալիերեն**-ի, **ֆիջիերեն**-ի և համանման լեզվանունների հետ:

Կա նաև **թաիթի** հիմքից **թաիթերեն**⁶⁷ (բառավերջի **ի**-ի անկմամբ), սակայն ճշգրիտ կլիներ **թաիթիերեն** կազմությունը: Այնուամենայնիվ, տակավին լուծելի է մնում **տ/թ**-ի, **հ**-ով և առանց **ի**-ի տարբերակայնության խնդիրը:

ՀԱՎԱՅԵՐԵՆ

Հավայան կղզիների բնիկները խոսում են ավստրոնեզիական ընտանիքի մալայա-պոլինեզյան խմբի մի լեզվով, որի համար XX դ. կեսերին Հր. Աճառյանի «Լիակատար քերականության» մեջ գործածվել է **հավայի լեզու** բաղադրյալ անվանումը. «Պոլինեզյան **հավայի լեզվի** անձնական դերանուններն են...»⁶⁸: Խոսողների թիվը 27 հազար է:

«Լեզվաբանական բառարանը» որպես գլխաբառ արձանագրել է **հավաի** լեզվանունը (իմմտ. անգլ. Hawaiian), թեև «Պոլինեզյան լեզուներ» բառահոդվածում **հավայի** ձևով է տրված⁶⁹, այսինքն՝ տարբերակայնություն կա միևնույն բառարանում:

⁶³ Հմմտ. «[Պոլ Գոգենը] 1891-ին մեկնել է **Տահիտի** կղզի» (Հայկական սովետական հանրագիտարան 1977, 142):

⁶⁴ Տե՛ս <http://eanc.net/> (Արևելահայերենի ազգային կորպուս՝ ԱՐԵՎԱԿ):

⁶⁵ Գեղարվեստական ուրիշ թարգմանություններում ևս **Թաիթի**-ն հաճախադեպ է: Օրինակ՝ «Անցավ ևս երկու, գուցե և երեք տարի, քանի որ ժամանակը **Թաիթիում** անցնում է աննկատելի և դժվար է դրա հաշիվը պահել» (Մոեմ 1989, 214):

⁶⁶ Աշխարհի պետությունների և տարածքների համառոտ տեղեկատու-բառարան 2012, 136:

⁶⁷ Ստեփանյան 2015, 13, 14:

⁶⁸ Աճառյան 1954, 31:

⁶⁹ Պետրոսյան, Գալստյան, Ղարազյուլյան 1975, 172, 262:

Հայկական սովետական հանրագիտարանի «Հավայացիներ» բառահոդվածում գրված է, որ Հավայան կղզիների հիմնական բնակիչները «խոսում են հավայական լեզվով, գիտեն նաև անգլերեն»⁷⁰:

Հավայական լեզու բառակապակցությունից օրինաչափորեն ստեղծվել է **հավայերեն** լեզվանունը. «ՄԱՈՒՆԱ-ԿԵԱ (Mauna Kea, **հավայերեն**, բառացի՝ սպիտակ լեռ), վահանաձև (հավայան) տիպի հանգած հրաբուխ խաղաղ օվկիանոսի Հավայի կղզում»⁷¹: Բայց դրանից տարիներ անց նույն հրաբխին նվիրված բառահոդվածում աշխարհագրական անունների բառարանում գործածվել է **հավայի լեզու** բառակապակցությունը. «Անվանումը (անգլ. Mauna Kea) **հավայի լեզվով** բառացի նշանակում է «սպիտակ լեռ» (գազաթը տարվա մեծ մասը ծյունածածկ է)»⁷²:

Հավայերեն լեզվանունը նպատակահարմար է մի քանի առումներով: Նախ (և ամենակարևորը)՝ հայերեն կազմություն է, երկրորդ՝ գործածողին ազատում է յ կիսաձայնը գրել-չգրելու մտահոգությունից և երրորդ՝ վերանում է բարբառային (խոսակցական) համանուն **հավայի** «իզուր տեղը, անտեղի» (Ղարաբաղ, Մեղրի և այլն)⁷³ բառի հետ մտային ականա զուգորդումը:

Հավայերեն լեզվանվան կազմության ժամանակ հաշվի են առնվել **հավայական, հավայացի** բառերը, և բառակազմական հիմք է դարձել **հավայ-ը՝ հավայ+երեն**:

Ներկայումս **հավայերեն-ը** տարբերակների մրցակցության մեջ հաղթել է: Ահա գործածության մեկական նմուշ գիտական խոսքից՝ «**Հավայերեն** լեզվում շեշտն ընկնում է նախավերջին վանկի վրա, եթե բառում բացակայում են երկար վանկերը (ծայնավորները)»⁷⁴ և մամուլից՝ «**Հավայերենի** մասնագետը տիեզերական օբյեկտը կոչել է Պոլեիի, ինչը թարգմանաբար նշանակում է «անվերջանալի մուգ լուսարձակող ստեղծագործություն»⁷⁵:

ՄԱՈՐԻԵՐԵՆ

Հյուսիսային կղզու բնիկների՝ մաորիների լեզուն Նոր Զելանդիայում պաշտոնական լեզվի կարգավիճակ ունի (անգլերենի հետ): Խոսողների թիվը՝ շուրջ 160 հազար:

Որպես այս լեզվի անուն՝ հայերենում սկզբնապես գործածվել է փոխառյալ **մաորի-ն**⁷⁶. այդպես է եվրոպական լեզուներում և ռուսերենում՝ Maori, maori, maori:

Պոլինեզյան խմբի այս լեզվի անունը նույնպես վերջերս հայերենացվել է: Այժմ հայերեն երկու տարբերակ է շրջանառվում՝ **ի-ի** անկմամբ՝ **մաորերեն**⁷⁷,

⁷⁰ Հայկական սովետական հանրագիտարան 1980, 259:

⁷¹ Հայկական սովետական հանրագիտարան 1981, 364:

⁷² Գրգեարյան, Հարությունյան 1989, 79-80:

⁷³ Հայոց լեզվի բարբառային բառարան 2004, 249:

⁷⁴ Ստեփանյան 2015, 24: Երբ **-երեն** ածանցը կա, **լեզու** բառի գործածությունն ավելորդ է:

⁷⁵ «Պատմության մեջ առաջին անգամ լուսանկարված սև խոռոչն անվանում է ստացել», <https://www.tert.am/am/news/2019/04/12/name/2972208>

⁷⁶ Պետրոսյան, Գալստյան, Ղարազյուլյան 1975, 210:

⁷⁷ Խաչատրյան 2008, 273, նաև Խաչատրյան 2021, 412:

և **ի**-ի պահպանումով՝ **մաորիերեն**⁷⁸: Մեր կարծիքով ընդունելի տարբերակը **մաորիերեն**-ն է: **Մաորիերեն**-ը բառակազմությամբ ներդաշնակ է **բալիերեն**, **ֆիջիերեն** և **ի** բաղադրիչ ունեցող մալայա-պոլինեզյան մյուս լեզվանուններին:

Հանրագիտական բառարանում, անտեսելով նշված բառային միավորները, լեզվի անունը տրված է բառակապակցությամբ՝ **մաորի լեզու** (ասենք, որ ռուսերենում որպես տարբերակ գործածվում է маорийский язык բաղադրյալ անվանումը):

ՆԻՈՒԵՐԵՆ

Խաղաղ օվկիանոսում՝ Պոլինեզիայում, Տոնգա կղզուց արևելք կա պետական մի կազմավորում՝ Նիուե, որտեղ անգլերենի հետ պաշտոնական լեզվի կարգավիճակ ունի բնիկների՝ նիուեցիների լեզուն (խոսողների թիվը՝ ութ հազար):

Հայերեն **նիուերեն** լեզվանունը նորակազմություն է: **Նիուե**-ի և **-երեն** ածանցի միացման ժամանակ մի **ե**-ն ընկել է: Կրկնակ **ե**-ով ունենք **արամեերեն**, **հրեերեն**, **կորեերեն** և այլն, բայց դրանք տարբեր են: **Ե**-ի սղումն այս դեպքում բնական է, քանի որ կրկնակ ծայնավորներին նախորդում են ևս երկու ծայնավոր՝ **ի**, **ու**, և ծայնավորների այդպիսի կուտակումն անհնար է դարձնում սահուն արտասանությունը: Լեզվանունը հազվադեպ է⁷⁹:

ՍԱՄՈԱՅԻ ԼԵԶՎԻ ԱՆՈՒՆԸ

Պոլինեզյան խմբին է պատկանում Սամոական կղզիների բնիկների՝ սամոացիների լեզուն, որը անգլերենի հետ պաշտոնական լեզվի կարգավիճակ ունի Սամոայում՝ Սամոայի Անկախ Պետությունում: Խոսողների թիվը՝ կես միլիոնից ավելի:

Հր. Աճառյանը գործածել է այդ լեզվի փոխառյալ անունը. «Օվկիանիայի **սամոա** լեզվում ածականը կազմվում է հետևյալ ձևերով...»⁸⁰: «Լեզվաբանական բառարանը», հենվելով գործածության փաստերի վրա, գրանցել է **սամոա** լեզվանունը (այդպես է ռուսերենում և եվրոպական լեզուներում):

Հայերեն լեզվանուն կազմելու առաջին փորձն արվել է հայկական բազմահատորյա հանրագիտարանում: Այսպես. «Տարրական դպրոցը 6-ամյա է. դասավանդումը անգլերեն և **սամոայերեն**», «Բոլոր թերթերն էլ անգլերեն ու **սամոայերեն** են»⁸¹: Բառի հիմքում անխաթար դրվել է **սամոա**-ն, որին երբ միացել է **-երեն** վերջածանցը, գոյացել է յ կիսաձայնը, որը գրվում է **ա**-ից հետո (սխալ է այս անվան առանց յ-ի՝ **սամոաերեն** տարբերակը⁸²): **Սամոայերեն** կազմությունը համահունչ է **տոնգայերեն** կազմությանը:

Շրջանցելով հայերեն լեզվանվան գոյությունը՝ լեզվանուն կազմելու փորձ է արվել վերջին շրջանում: Այս դեպքում բառավերջի **ա**-ն կրճատվել է, որ

⁷⁸ Աշխարհի պետությունների և տարածքների համառոտ տեղեկատու-բառարան 2012, 90:

⁷⁹ Աշխարհի պետությունների և տարածքների համառոտ տեղեկատու-բառարան 2012, 90:

⁸⁰ Աճառյան 1952, 16:

⁸¹ Հայկական սովետական հանրագիտարան 1976, հ. 2, 44 («Արևմտյան Սամոա» բառափոխադրում), նաև Աշխարհի պետությունների և տարածքների համառոտ տեղեկատու-բառարան 2012, 105:

⁸² Հանրագիտական բառարան 2018, 763:

հիմնավորված չէ, և ավելացվել է **–երեն** ածանցը՝ **սամոերեն**⁸³: Այս տարբերակը տեսնում ենք նաև դպրոցական հանրագիտարանում⁸⁴: Համացանցային կայքերում հազվադեպ պատահում է յ-ով տարբերակը՝ **սամոյերեն**:

Մեր կարծիքով, նախընտրելի է **սամոայերեն** լեզվանունը, որը հստակ հուշում է, թե ո՞ր լեզվի մասին է խոսքը:

ՏՈԿԵԼԱՌԻԵՐԵՆ

Տոկելաուերենը Տոկելաու փոքրիկ պետության պաշտոնական լեզուն է (անգլերենի հետ)⁸⁵: Պոլինեզիացի բնիկների այս լեզվով Տոկելաուում, Նոր Զելանդիայում և Ամերիկյան Սամոայի Սուեյնս կղզում խոսում է մոտ 5000 մարդ:

Տոկելաուերեն բառը նորակազմություն է:

ՏՈՆԳԱՅԵՐԵՆ

Պոլինեզիայի Տոնգայի կղզիների՝ Միացյալ Թագավորությունից 1970 թ. անկախացած Տոնգայի Թագավորության հիմնական բնակչության լեզուն է, պաշտոնական լեզվի կարգավիճակ ունի (անգլերենի հետ): Խոսողների թիվը շուրջ 200 հազար է:

Այս լեզվի անունը ևս հայերենում տարբերակներ ունի: Հր. Աճառյանը քանիցս գործածել է **տոնգա** փոխառյալ լեզվանունը. «Օվկիանիայի **տոնգա** լեզվի մեջ համեմատական աստիճանը ստանալու համար դրվում է *ange* «հակառակ, նման, համեմատած» բառը»⁸⁶: Հիմք ընդունելով գործածության փաստերը՝ լեզվաբանական բառարանները գրանցել են **տոնգա** գլխաբառը⁸⁷:

Լեզվանունների հայերենացման ընթացքում վերջին ժամանակներում կազմվել է **տոնգայերեն** բառը (յ-ի օրինաչափ կիրառմամբ): Հազվադեպ է⁸⁸:

ԿՈՒԿԻ ԿՂԶԻՆԵՐԻ ԲՆԻԿՆԵՐԻ ԼԵԶՎԻ ԱՆՈՒՆԸ

Պոլինեզիայում գտնվող Կուկի Կղզիներ (այդպես է կոչվել հայտնաբերողի՝ անգլիացի ծովագնաց Զ. Կուկի անունով) փոքրիկ պետությունում պաշտոնական լեզվի կարգավիճակ ունեն անգլերենը և բնիկների լեզուն: Ընդամենը շուրջ երկու տասնյակ հազար խոսող ունեցող լեզվի համար հայերենում գործածվում են տարբերակային մի քանի անուններ: Դրանք բառային և ուղղագրական տարբերակներ են:

ա) Բառասկզբի տառի տարբերակայնությամբ հանդիպում են **ռարո-տոնգա**⁸⁹/ **րարոտոնգա**⁹⁰ լեզվանունները:

⁸³ Խաչատրյան 2008, 273, Խաչատրյան 2021, 412:

⁸⁴ Դպրոցական մեծ հանրագիտարան 2008, 543:

⁸⁵ Աշխարհի պետությունների և տարածքների համառոտ տեղեկատու-բառարան 2012, 126:

⁸⁶ Աճառյան 1952, 81:

⁸⁷ Հարությունյանց 1963, 216, Պետրոսյան, Գալստյան, Ղարաբյուլյան 1975, 294: Կա նաև համանուն **տոնգա** (կամ **վացոնգա**), որը աֆրիկյան՝ բանտու լեզվախմբի հարավարևելյան ենթախմբի լեզու է (Աղայան 1967, 628):

⁸⁸ Տե՛ս, օրինակ, Աշխարհի պետությունների և տարածքների համառոտ տեղեկատու-բառարան 2012, 126:

⁸⁹ Աղայան 1967, 586:

⁹⁰ Պետրոսյան, Գալստյան, Ղարաբյուլյան 1975, 262:

բ) Նշված փոխառյալ լեզվանունն ընկել է **-երեն** ածանցով կազմված **ռարոտոնգաներեն**-ի հիմքում: Այստեղ ն-ի ներմուծումն օտար ազդեցության հետևանք է (հմմտ. ռուս. раротонганский язык, գերմ. Rarotonganische Sprache, անգլ. նաև Rarotongan): Հայերեն ճիշտ կազմությունը պիտի լիներ **ռարոտոնգայերեն**, ինչպես որ ունենք **տոնգա - տոնգայերեն**:

գ) Կա նաև եռաբաղադրիչ անուն՝ **Կուկի կղզիների մաորիերեն**⁹¹ (հմմտ. ռուս. маори островов Кука, անգլ. Cook Islands Maori): Իհարկե, նպատակահարմար կլիներ կարճ տարբերակը՝ **Կուկի մաորիերեն**:

դ) Համացանցում (օրինակ՝ Վիքիպեդիայի «Պոլինեզիական լեզուներ» կաղապարում) հանդիպում է ամենակարճ տարբերակը՝ **կուկերեն** (հմմտ. ռուս. кукский язык): Մենք նախապատվությունը հենց սրան կտայինք. նշվում է կղզանունը, կա «լեզու» նշանակող մասնիկը:

ՄԱՐԿԻԳՅԱՆ

Այս լեզվով (այլ կերպ ասած՝ բարբառների խմբով) խոսում են Ֆրանսիական Պոլինեզիայում՝ Մարկիզյան կղզիներում: Խոսողների թիվը՝ 11 հազար:

Հայերեն լեզվաբանական աշխատություններում սկզբնապես գործածվել է **Մարքիզյան կղզիների լեզու** բաղադրյալ անվանումը: Օրինակ՝ «Համեմատելի եզրը *վարարանելու* այս ձևը ունի **Մարքիզյան կղզիների լեզուն**»⁹²: «Լեզվաբանական բառարանում» արձանագրվել է **Մարկիզյան կղզիների լեզու** ձևով⁹³:

Փոխառյալ լեզվանունները հայերենացնելու գործընթացի մեջ ներառվեց նաև այս լեզվանունը, և կազմվեց **մարկիզերեն** բառը: Օրինակ՝ «Արևելա-պոլինեզիական ճյուղին պատկանող թաիթերեն, **մարկիզերեն**, մանգարևա, հավայերեն և մաորի լեզուներն ունեն 85,3 % ընդհանուր բառապաշար»⁹⁴:

ՈՒՂԼԻՍԵՐԵՆ ԵՎ ՖՈՒՏՈՒՆԵՐԵՆ

Ֆրանսիայի անդրծովյան տարածքի կարգավիճակ ունի Ուոլիսը և Ֆուտունան, որի պաշտոնական լեզուն ֆրանսերենն է: Բնիկների լեզուները խիստ վտանգված են արտագաղթի և ֆրանսերենի վրա հիմնված կրթական համակարգի և ուրիշ պատճառներով: Կղզիների պոլինեզիացի բնիկների լեզուների համար եվրոպական ազդեցությամբ ստեղծվել և համացանցում (Վիքիպեդիա ազատ հանրագիտարանում) գործածվել են **ուոլիսերեն** և **ֆուտուներեն** հայերեն օրինաչափ անունները:

4. ՄԻԿՐՈՆԵԶՅԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ

ՄԱՐՇԱԼԵՐԵՆ

ԱՄՆ-ից 1986-ի հոկտեմբերի 21-ին անկախություն հռչակած Մարշալյան Կղզիների Հանրապետության պաշտոնական լեզուներն են մարշալերենը և

⁹¹ Աշխարհի պետությունների և տարածքների համառոտ տեղեկատու-բառարան 2012, 61:

⁹² Աճառյան 1952, 43:

⁹³ Պետրոսյան, Գալստյան, Ղարազյույան 1975, 212, որտեղ սխալմամբ համարվել է մելանեզյան ճյուղի լեզու:

⁹⁴ Ստեփանյան 2015, 13:

անգլերենը⁹⁵: Մարշալերենը պատկանում է միկրոնեզյան ճյուղի լեզուներին, խոսողների թիվը փոքր է՝ մոտ 44 հազար:

Երկրանվան բառակազմական հիմքը 1788-ին կղզեխումբը հետազոտած նավապետ Զ. Մարշալի ազգանունն է, երկրի բնակիչները մարշալցիներն են:

Հայերենում նախ գործածվել է **Մարշալյան կղզիների լեզու** բաղադրյալ անունը, օրինակ՝ «**Մարշալյան կղզիների լեզվով**՝ յնօռ, ռնօ...»⁹⁶, հմմտ. նաև «Միկրոնեզյան **մարշալ լեզվում** երկակիի և հոգնակիի պատճառով կան բազմաթիվ դերանուններ»⁹⁷:

Վերջերս, հետևելով ընդհանուր միտումին, կազմվել է մենաբառ անունը՝ **մարշալերեն**: Լեզվանվան հիմք կարող էին դառնալ թե՛ աշխարհագրական անունը, թե՛ ժողովրդանունը: Նորակազմություն է, բառարանային գրանցում չունի:

ՆԱՌԻՐՈՒԵՐԵՆ

Նաուրուի Հանրապետության պաշտոնական լեզուներն են անգլերենը և փոքրաթիվ նաուրուացիների լեզուն (խոսողների թիվը՝ մոտ 11 հազար):

Այդ լեզուն անվանելու համար հայերենում սկզբնապես գործածվել է փոխառյալ **նաուրու** բառը⁹⁸, **-երեն** ածանցով վերջերս կազմվել է **նաուրուերեն**-ը⁹⁹: Նկատելի է, որ **ու**-ով վերջացող լեզվանունները հայերենացնելիս որպես կանոն տարբերակներ չեն առաջանում, ինչպես՝ **պալաուերեն, ռապանուերեն, տոկելաուերեն, տուվալուերեն**, այնինչ **ա**-ով և **ի**-ով վերջացողներում այդպես չէ:

ԿԻՐԻԲԱՏԻԻ ԼԵԶՎԻ ԱՆՈՒՆԸ

Կիրիբատիի Հանրապետության պաշտոնական լեզուներն են անգլերենը և միկրոնեզիացի բնիկների լեզուն, որով խոսում են նաև Տուվալուում, Ֆիջիում և Սողոմոնյան կղզիներում: Խոսողների ընդհանուր թիվը՝ 102 հազար:

Կիրիբատի լեզվանունը համանուն է տեղանվանը, որն այդպես է կոչվել անգլիացի ծովագնաց Թ. Գիլբերտի պատվին (երկրի ներկա անունը առաջացել է տեղացիների խոսքում Գիլբերտ [Ջիլբերտ] ազգանվան աստիճանական հնչյունափոխություն-ձևափոխությունից՝ Գիլբերտի-Կիրիբետի-Կիրիբատի):

Կիրիբատի-ից **-երեն** ածանցով կազմվել և համացանցում գործածվել է **կիրիբատիերեն** լեզվանունը (**ի**-ի պահպանման տեսանկյունից հմմտ. **բալիերեն, ֆիջիերեն, մաորիերեն** և այլն): Սա նախընտրելի տարբերակ է, քանի որ վերացնում է տեղանվան և լեզվանվան համանունությունը:

⁹⁵ Աշխարհի պետությունների և տարածքների համառոտ տեղեկատու-բառարան 2012, 78:

⁹⁶ Աճառյան 1952, 400:

⁹⁷ Աճառյան 1954, 23:

⁹⁸ Հայկական սովետական հանրագիտարան 1982, 211 («Նաուրու» բառահոդվածը):

⁹⁹ Աշխարհի պետությունների և տարածքների համառոտ տեղեկատու-բառարան 2012, 87, Հանրագիտական բառարան 2018, 473:

Համացանցում հանդիպում են կղզու անվան մյուս հիմքով կազմված **գիլբերտերեն** (հմմտ. ռուս. язык гилбертцев¹⁰⁰) և **ջիլբերթերեն** տարբերակները (հմմտ. անգլ. Gilbertese language, որը Kiribati-ի տարբերակն է):

Եզրակացություններ

1. Ավստրոնեզիական կամ մալայա-պոլինեզյան ընտանիքի մի քանի տասնյակ լեզուների անուններ են գործածվել հայերենում: Դրանք փոխառություններ են (**մարովո, բատակ, բոնտոկ, դայան** և այլն) և հայերեն կազմություններ (**մալայերեն, ճավայերեն, ինդոնեզերեն, մալգաշերեն** և այլն):

2. Լեզվանունների մեծ մասը տարբերակայնություն է դրսևորել: Կան ուղղագրական (տառադարձման), բառակազմական և բառային տարբերակներ, ինչպես՝ **իլոկո – իլոկանո – իլոքերեն, տագալոգ – տագալերեն – թագալերեն – տագալոգերեն – թագալոգերեն, տոնգա – տոնգայերեն, սամոա – սամոերեն – սամոյերեն – սամոայերեն, ռապանուի – ռապանուերեն, բիկոլ – բիկոլերեն – բիքոլերեն** և այլն: Հանձնարարելի գիտական անվանացանկի ստեղծումը կնպաստի լեզվանունների կանոնարկմանը:

3. Մալայա-պոլինեզյան լեզուների ընդամենը մի քանի հայերեն անուններ կան, որոնք տարբերակներ չեն ունեցել (և չունեն)՝ **մալայերեն, ինդոնեզերեն, պալաուերեն**:

4. Հատկապես վերջին շրջանում մալայա-պոլինեզյան լեզուների անունների հայերենացման գործընթացը, որն սկսվել է Հայկական սովետական հանրագիտարանի հրատարակումով, ավելի է ծավալվում: Առայժմ **-երեն** ածանցով կազմվել և գործածվում են հետևյալ լեզվանունները.

ա) ինդոնեզյան ճյուղից՝ **մալայերեն, ինդոնեզերեն, մալգաշերեն, տագալերեն/թագալերեն, ճավայերեն, մադուրերեն, մակասարերեն, սունդերեն, բալիերեն, բուգերեն, թեթումերեն, իբաներեն, իլոկերեն,**

բ) մելանեզյան ճյուղից՝ **ֆիջիերեն,**

գ) պոլինեզյան ճյուղից՝ **պալաուերեն, տուվալուերեն, ռապանուերեն, թաիթ(ի)երեն/տահիտիերեն, հավայերեն, մաորիերեն, ռարոտոնգայերեն, նիուերեն, սամոայերեն, տոկելաուերեն, տոնգայերեն, մարկիզերեն, ուոլիսերեն, ֆուտուներեն,**

դ) միկրոնեզյան ճյուղից՝ **մարշալերեն, նաուրուերեն, կիրիբատիերեն:**

5. Հայերենի բանասիրական (լեզվաբանական) և հանրագիտական բառարաններում մալայա-պոլինեզյան մի շարք լեզուների անուններ գլխաբառ են դարձել, **-երեն** ածանցով կազմվածներից՝ **ինդոնեզերեն, ճավայերեն, մալայերեն, մալգաշերեն, մակասարերեն:**

6. Ավստրոնեզիական կամ մալայա-պոլինեզյան լեզվաընտանիքի լեզուներից մի քանիսը պետական-պաշտոնական լեզվի կարգավիճակ ունեն. **ինդոնեզերենը՝** Ինդոնեզիայում, **մալայերենը՝** Մալայզիայում, Սինգապուրում (անգլերենի, չինարենի և թամիլերենի հետ) և Բրունեյում, **տագալերենը՝** Ֆի-

¹⁰⁰ Кодухов 1979, 328.

լիպիններում, մալգաշերենը (ֆրանսերենի հետ)՝ Մադագասկարի Հանրապետությունում, ֆիջիերենը (անգլերենի և ֆիջիի հինդիի հետ)՝ Ֆիջիի Կղզիների Հանրապետությունում, թեթումերենը (պորտուգալերենի հետ)՝ Արևելյան Թիմորի Ժողովրդավարական Հանրապետությունում: Մի շարք լեզուներ պաշտոնական են անգլերենի հետ. մաորիերենը՝ Նոր Զելանդիայում, մարշալերենը՝ Մարշալյան Կղզիների Հանրապետությունում, նաուրուերենը՝ Նաուրուի Հանրապետությունում, նիուերենը՝ Նիուեում, պալաուերենը՝ Պալաուի Հանրապետությունում, սամոայերենը՝ Սամոայի Անկախ Պետությունում, տոկելաուերենը՝ Տոկելաուի, տոնգայերենը՝ Տոնգայի Թագավորությունում: Այս փաստն արդիական է դարձնում լեզուների անվանացանկի միօրինականացումը:

Գրականություն

- Աբրահամյան Ա.Գ. 1967, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. 2, Երևան, «Հայաստան», 424 էջ:
- Աղայան Է.Բ. 1967, Լեզվաբանության ներածություն, Երևան, «Միտք», 638 էջ:
- Աղայան Է.Բ. 1976, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան», 1642 էջ:
- Աղայան Է.Բ. 1987, Լեզվաբանության հիմունքներ, Երևան, ԵՊՀ հրատ., 736 էջ:
- Աճառյան Հ. 1952, Լիակատար քերականություն հայոց լեզվի, համեմատությամբ 562 լեզուների, հ. 1, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 494 էջ:
- Աճառյան Հ. 1954, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 2, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 478 էջ:
- Աճառյան Հ. 1955, Լիակատար քերականություն հայոց լեզվի, Ներածություն, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 656 էջ:
- Աճառյան Հր. 2002, Հայ գաղթականության պատմություն, Երևան, «Ձանգակ-97», 768 էջ:
- Անդրեասյան Գր.Մ. 1976, Գերմաներեն-հայերեն բառարան, Երևան, ԵՊՀ հրատ., 906 էջ:
- Աշխարհի պետությունների և տարածքների համառոտ տեղեկատու-բառարան 2012, Երևան, «Գեոդեզիա և քարտեզագրություն» ՊՈԱԿ, 142 էջ:
- Ասմանգուլյան Հ.Ա., Հովհաննիսյան Մ.Ի. 1984, Անգլերեն-հայերեն բառարան, Երևան, «Հայաստան», 1144 էջ:
- Բարլեզիզյան Ա. 2009, Հայերեն-ֆրանսերեն բառարան, Երևան, ԵՊՀ հրատ., 976 էջ:
- Բարսեղյան Հ.Խ. 1973, Հայերեն ուղղագրական-ուղղախոսական, տերմինաբանական բառարան, Երևան, «Լույս», 980 էջ:
- Գյուրջինյան Դ. 2021, Արամեացիների լեզվի հայերեն անունը, Հայագիտական հանդես, N 3, էջ 3-17:
- Գյուրջինյան Դ. 2021, Հրեաների լեզվի հայերեն անունները և դրանց տարբերակները, Հայագիտական հանդես, N 4, էջ 3-17:
- Գյուրջինյան Դ. 2021, Բալթիական լեզուների հայերեն անունների տարբերակայնության մասին, Լրաբեր հասարակական գիտությունների, N 2, Երևան, էջ 217-239:
- Գյուրջինյան Դ. 2021, Հրեաների լեզվի հայերեն անունների և դրանց տարբերակների բառարանային մշակման պատմությունը, Բանբեր հայագիտության, N 3, էջ 216-231:
- Գյուրջինյան Դ. 2021, Հնդկական լեզուների անունները հայերենում. գործածության, կանոնարկման և բառարանային մշակման հարցեր / Հայ բառարանագրության արդի խնդիրները ու հեռանկարը, պրակ Բ, Միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, «Քոփի պրինտ», էջ 17-37:
- Գյուրջինյան Դ. 2022, Հայերեն լեզվանունների յուրահատուկ մի խմբի մասին, Հայագիտական հանդես, N 1, էջ 30-54:

- Գրգեարյան Հ., Հարությունյան Ն. 1989, Աշխարհագրական անունների բառարան, հ. 2, Երևան, «Լույս», 472 էջ:
- Գույումճեան Մ.Կ. 1950, Ընդարձակ բառարան հայերէնէ անգլիերէն, Կահիրե, «Սահակ-Մեսրոպ» տպ., 1152 էջ:
- Դպրոցական մեծ հանրագիտարան 2008, գիրք 1, հ. 2, Երևան, Հայկական հանրագիտարան, 560 էջ:
- Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան 1974, հ. 3, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 576 էջ:
- Խաչատրյան Լ.Մ. 2008, Լեզվաբանության ներածություն, Երևան, «Զանգակ», 304 էջ:
- Խաչատրյան Լ.Մ. 2021, Լեզվաբանական տերմինների ուսումնական բառարան, Երևան, «Գիտություն», 446 էջ:
- Հայ գաղթաշխարհի պատմություն (միջնադարից մինչև 1920 թ.) 2003, հ. 2, Երևան, «Գիտություն», 520 էջ:
- Հայկական սովետական հանրագիտարան 1974, հ. 1, Երևան, Հայկական սովետական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, 720 էջ:
- Հայկական սովետական հանրագիտարան 1976, հ. 2, Երևան, Հայկական սովետական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, 720 էջ:
- Հայկական սովետական հանրագիտարան 1977, հ. 3, Երևան, Հայկական սովետական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, 720 էջ:
- Հայկական սովետական հանրագիտարան 1980, հ. 6, Երևան, Հայկական սովետական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, 720 էջ:
- Հայկական սովետական հանրագիտարան, 1981, հ. 7, Երևան, Հայկական սովետական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, 720 էջ:
- Հայկական սովետական հանրագիտարան, 1982, հ. 8, Երևան, Հայկական սովետական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, 720 էջ:
- Հայկական սովետական հանրագիտարան 1985, հ. 11, Երևան, Հայկական սովետական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, 720 էջ:
- Հայկական սովետական հանրագիտարան 1986, հ. 12, Երևան, Հայկական սովետական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, 752 էջ:
- Հայոց լեզվի բարբառային բառարան 2004, հ. 3, Երևան, «Գիտություն», 424 էջ:
- Հայոց լեզվի հանգաբառարան 1976, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 655 էջ:
- Հայ-ռուսերեն բառարան 1987, գլխ. խմբ.՝ Ե.Հ. Գալստյան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 724 էջ:
- Հանրագիտական բառարան 2016, հ. 1, Երևան, Հայկական հանրագիտարան հրատ., 1120 էջ:
- Հանրագիտական բառարան 2018, հ. 2, Երևան, Հայկական հանրագիտարան հրատ., 1144 էջ:
- Հարությունյան Հ. 2016, Աշխարհի բնակչության էթնոլեզվադավանական հակիրճ բնութագիրը / Պատմություն և մշակույթ, Հայագիտական հանդես (գիտական հոդվածների ժողովածու), Երևան, ԵՊՀ հրատ., էջ 398-424:
- Հարությունյանց Մ. 1963, Հայ-ռուսերեն լեզվաբանական բառարան, Երևան, 308 էջ (ծեռագրի իրավունքով):
- Մոեմ Ս. 1989, «Լուսին և վեցպենսանոց», Պատմվածքներ (բնագրից թարգմանեց Ա. Խաչատրյանը), Երևան, «Լույս», 528 էջ:
- Յ. Տ. Կ. Յ. 1899, Ճապոնի հայ գաղթականությունը, Բազմավեպ, հոկտեմբեր, էջ 463-466:
- Մ. Յովհաննէսեան 1925, Բառարան հայերէն-ֆրանսերէն, Կ. Պոլիս, խմբ.՝ Բ. Զարդարյան, 1072 էջ:
- Հ. Գեորգ Պայեան 1926, Բառարան հայերէն-գաղղիերէն, հ. Բ, Վենետիկ, Սուրբ Ղազար, էջ 2310:

Պատմության մեջ առաջին անգամ լուսանկարված սև խոռոչն անվանում է ստացել, <https://www.tert.am/am/news/2019/04/12/name/2972208> (ներբեռնման օրը՝ 20.02.2022):

Պետրոսյան Հ.Զ., Գալստյան Ս.Ա., Ղարաբյուրյան Թ.Ա. 1975, Լեզվաբանական բառարան, Երևան, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատ., 318 էջ:

Ջահուկյան Գ. 1960, Լեզվաբանության պատմություն, հ. 1, Երևան, ԵՊՀ հրատ., 636 էջ:

Ռոդըմ Զ. 2020, «Այսպիսին է Գոգենը», անգլ. թարգմանությունը՝ Լ. Հայրապետյանի, Երևան, «Զանգակ», 80 էջ:

Ռուս-հայերեն բառարան 1956, հ. 2, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 688 էջ:

Ստեփանյան Լ.Գ. 2015, Հայ-պոլիներգիական լեզվամշակութային ընդհանրություններ, Երևան, «Յասուն», 380 էջ:

Տեմիրճիպաշեան Ե. 1896, Բառարան ֆրանսերենի հայերեն, Կ. Պոլիս, Գ. Պաղտատլեան տպ., 938 էջ:

Փափազեան Զ.Տ.Ս. 1905, Գործնական բառարան հայերեն-անգլիերեն, Կ. Պոլիս, Յ. Մատթեոսեան տպ., 508 էջ:

Кодухов В.И. 1979, Введение в языкознание, Москва, «Просвещение», 352 с.

ԱՎԱՏՐՈՆԵԶԻԱԿԱՆ (ՄԱԼԱՅԱ-ՊՈԼԻՆԵԶՅԱՆ) ԼԵՂՈՒՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԱՆՈՒՆԵՐԸ. ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՆՈՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Դավիթ Գյուրջինյան

Ամփոփում

Հայերենում գործածվում են ավատրոներգիական կամ մալայա-պոլիներգյան ընտանիքի մի քանի տասնյակ լեզուների անուններ: Դրանց մեծ մասն ունի տարբերակներ (ուղղագրական, բառակազմական և բառային տարբերակներ, ինչպես՝ **իլոլո – իլոկանո – իլոքերեն / իլոքերեն, տագալոգ – տագալերեն / թագալերեն – տագալոգերեն / թագալոգերեն, տոնգա – տոնգայերեն** և այլն: Ընդամենը մի քանի լեզվախմբներ կան, որոնք տարբերակներ չեն ունեցել (և չունեն), ինչպես՝ **մալայերեն, ինդոնեզերեն:**

Ավատրոներգիական կամ մալայա-պոլիներգյան լեզվաընտանիքի լեզուներից մի քանիսը պաշտոնական լեզվի կարգավիճակ ունեն. ինդոնեզերենը՝ Ինդոնեզիայում, մալայերենը՝ Մալայզիայում և Բրունեյում, մալգաշերենը (ֆրանսերենի հետ)՝ Մադագասկարի Հանրապետությունում, ֆիջիերենը (անգլերենի և հինդիի հետ)՝ Ֆիջիի Կղզիների Հանրապետությունում, մաորիերենը (անգլերենի հետ)՝ Նոր Զելանդիայում և այլն: Այս փաստն արդիական է դարձնում լեզուների անվանացանկի միօրինականացումը:

Վերջին շրջանում նկատելիորեն ակտիվացել է մալայա-պոլիներգյան լեզուների անունների հայերենացման գործընթացը: Առայժմ –**երեն** ածանցով կազմվել և գործածվում են ավատրոներգիական լեզուների երեսունից ավելի անուններ.

ա) ինդոնեզյան ճյուղից՝ **մալայերեն, ինդոնեզերեն, մալգաշերեն, տագալերեն / թագալերեն, ճավայերեն, մադուրերեն, մակասարերեն, բալիերեն** և այլն,

բ) մելանեզյան ճյուղից՝ **ֆիջիերեն,**

գ) պոլիներգյան ճյուղից՝ **տուվալուերեն, ռապանուերեն, պալաուերեն, հավայերեն, մաորիերեն, տոկելաուերեն, տոնգայերեն** և այլն,

դ) միկրոնեզյան ճյուղից՝ **մարշալերեն, նաուրուերեն, կիրիբատիերեն:**

Մալայա-պոլիներգյան մի շարք լեզուների անուններ գլխաբառ են դարձել հայերենի տարբեր բառարաններում:

Բանալի բառեր՝ ավստրոնեզիական/մալայա-պոլինեզյան լեզվաընտանիք, լեզուների հայերեն անվանումները, բառային տարբերակ, բառակազմական տարբերակ, կանոնարկում, ուղղագրական տարբերակ, լեզվանունների միասնականացում:

АРМЯНСКИЕ НАЗВАНИЯ АВСТРОНЕЗИЙСКИХ (МАЛАЙСКО-ПОЛИНЕЗИЙСКИХ) ЯЗЫКОВ: ВОПРОСЫ УПОТРЕБЛЕНИЯ И СТАНДАРТИЗАЦИИ

Давид Гюрджинян

Резюме

В армянском языке используется несколько десятков названий языков австронезийской или малайско-полинезийской семьи. Большая часть этих названий имеет различные варианты (орфографические, словообразовательные и лексические): իլոկո «илоко» – իլոկանո «илокано» – իլոքերեն / իլոքերեն «илоканский», տաղալոգ – տաղալերեն / թաղալերեն – տաղալոգերեն / թաղալոգերեն «тагалог / тагальский / тагалогский язык», տոնգա «тонга» – տոնգալերեն «тонганский» и др. Лишь отдельные армянские названия имеют единичную форму: մալայերեն «малайский язык», ինդոնեզերեն «индонезийский». Цель данного исследования – способствовать унификации армянских названий малайско-полинезийских языков.

Некоторые языки малайско-полинезийской семьи имеют статус официального: индонезийский – в Индонезии, малайский – в Малайзии и Брунее, малагасийский (с французским) – на Мадагаскаре, фиджи (с английским и хинди) – в Республике Фиджи, маори (с английским) – в Новой Зеландии и т.д. Этот факт актуализирует вопрос унификации названий языков.

В последнее время активизировался процесс арменизации названий малайско-полинезийских языков. В современном армянском употребляется более тридцати названий австронезийских языков, образованных с суффиксом -երեն:

а) индонезийская группа: մալայերեն «малайский», ինդոնեզերեն «индонезийский», մալգաշերեն «мальгашский / малагасийский», ճավայերեն «яванский», մադուրերեն «мадурский», մակասիալերեն «макасарский», բալիերեն «балийский» т.д.;

б) меланезийская группа: ֆիջիերեն «фиджийский язык»;

в) полинезийская группа: տոնգալերեն «тувалу», րապанուերեն «рапануйский», ցаппулерեն «палау», հավայերեն «гавайский», մաորիերեն «маори», տոկելулерեն «токекау», տոնգալերեն «тонганский» и т.д.;

г) микронезийская группа: մարշալերեն «маршалльский», նաուрулерեն «науру», կիրибатուերեն «кирибати».

Названия малайско-полинезийских языков стали заглавными словами в различных словарях армянского языка.

Ключевые слова – австронезийская/малайско-полинезийская семья языков, армянские названия языков, орфографический вариант, словообразовательный вариант, лексический вариант, нормирование, унификация названий языков.

**ARMENIAN NAMES OF THE AUSTRONESIAN (MALAY-POLYNESIAN) LANGUAGES:
ISSUES OF USE AND STANDARDIZATION**

Davit Gyurjinyan

Abstract

Several dozen names of languages of the Austronesian or Malayo-Polynesian family are used in the Armenian language. Most of these names have different variants (spelling, derivational and lexical): իլոկո – իլոկանո – իլոքերեն / իլոքերեն "ilocano", տագալոգ – տագալերեն / թագալերեն – տագալոգերեն / թագալոգերեն "tagalog", տոնգա – տոնգայերեն "tongan" and others. Only separate Armenian names have a single form: մալայերեն "Malay language", ինդոնեզերեն "Indonesian". The purpose of this study is to contribute to the unification of the Armenian names of the Malayo-Polynesian languages.

Some languages of the Malayo-Polynesian family have official status: Indonesian in Indonesia, Malay in Malaysia and Brunei, Malagasy (with French) in Madagascar, Fiji (with English and Hindi) in the Republic of Fiji, Maori (with English) in New Zealand, etc. This fact actualizes the issue of unification of the names of languages.

Recently, the process of Armenization of the names of the Malayo-Polynesian languages has intensified. Currently, more than thirty names of Austronesian languages are used in Armenian, formed with the suffix -երեն:

a) Indonesian group: մալայերեն "Malay language", մալգաշերեն "Malagasy", ճավայերեն "Javanese", մակասարերեն "Makassarese", բալիերեն "Balinese" etc.;

b) Melanesian group: ֆիջիերեն "Fijian language";

c) Polynesian group: տուվալուերեն "Tuvaluan language", ռապանուերեն "Rapanui/Pascuan", պալաուերեն "Palauan", հավայերեն "Hawaiian", մաորիերեն "Maori", տոկելաուերեն "Tokelauan", տոնգայերեն "Tongan" etc.;

d) Micronesian group: մարշալերեն "Marshallese", նաուրուերեն "Nauruan", կիրիբատիերեն "Kiribati".

The names of the Malayo-Polynesian languages have become headwords in various dictionaries of the Armenian language.

Key words – Austronesian/Malaysian-Polynesian language family, Armenian names of languages, spelling option, word-forming option, lexical option, regulation, unification of languages.